Հավելված 4
«ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-1/19-ԲՆԱ» **ծածկագրով**
Էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-1/19-ԲՆԱ/6

N _____

Հ.Հ. «___» _____ 2019 թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն-ը ի դեմս Արամ Հակոբյան-ի, որը գործում է ՀՀ ազգային անվտանգության ծառայություն-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **Վիոլա ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ա. Մեժլումյանի**, որը գործում է **Վիոլա ՍՊԸ-ի** կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **320 100 (երեք հարյուր քսան հազար հարյուր)** ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

2 Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը կիրառելի չէ:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	«Վիոլա» ՍՊԸ
Նալբանդյան 104	ք. Երևան, Աճառյան փ. 2-րդ նրբ. թիվ 3
010-579-599	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	
900011301075	1570001092880100
01507079	00801026
Արամ Հակոբյան	Ա. Մեժլումյան
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

HAKOBYAN ARAM 3507590174

Digitally signed by HAKOBYAN ARAM 3507590174
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••, serialNumber=64f4b4da096f, cn=HAKOBYAN ARAM 3507590174
Date: 2019.03.18 16:56:33 +04'00'

Digitally signed by MEZHLUMYAN ARMEN 2104620082
Date: 2019.03.15 16:21:09 GMT+04:00

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի								
Ընդհանուր կամ նախահաշվային գումարներով գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատակարարում	
26	33211110/1	Մեդիասքրին MediScreen 10/Մեզի մեջ գլյուկոզի, արյան, սպիտակուցի, pH, կետոնների, տեսակարար կշռի, նիտրիտների, լեյկոցիտների, ուռոբիլինոգենի – բիլիռուբինի որոշման թեսթ ստրիպների հավաքածու	Ախտորոշող թեսթ-սիստեմ կլինիկական անալիզի համար Մեզի մեջ գլյուկոզի, արյան, սպիտակուցի, pH, կետոնների, տեսակարար կշռի, նիտրիտների, լեյկոցիկների, ուռոբիլինոգենի և բիլիռուբինի որոշման թեսթ-ստրիպների հավաքածու (MediScreen 10 կամ համարժեքը) Մեթոդ: ինդիկատորի գունավորում: Փաթեթավորումը 100 թեսթ: Ստուգվող նմուշ: մեզ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները 2-30oC, For In Vitro Diagnostic only: 1 հատը համարժեք է 1 թեսթի:(Կցված ֆայլ՝ lot_26_i_texnikakan_bnutagir.docx) VioLine 10 Հարավային Կորեա	հատ	5,52	27600	5000	Հասցե: Ք. Երևան, Ամիրյան 23 Ենթակա քանակներ: 5000 Ժամկետներ՝ 2019թ-ի մարտի 31-ը՝	
27	33211120/1	գլյուկոզ G-col /գլյուկոզի որոշման թեսթ-հավաքածու	Ախտորոշող թեսթ-սիստեմ բիոքիմիական անալիզի համար Մեթոդ: կոլորիմետրիկ (ծայրակետ) Ֆորմատ: 1x200 մլ կամ 2x100 մլ ներառյալ Եռքլորքացախաթթու 3%, 100մլ ամբողջական արյան համար/1 թեսթը 1 մլ է/ Ստուգվող նմուշ: արյան շիճուկ/ պլազմա/ամբողջական արյուն Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները 2-8oC, For In Vitro Diagnostic only(Կցված ֆայլ՝ lot_27_i_texnikakan_bnutagir.docx) Հնդկաստան	հատ	12,44	37320	3000	Հասցե: Ք. Երևան, Ամիրյան 23 Ենթակա քանակներ: 3000 Ժամկետներ՝ 2019թ-ի մարտի 31-ը՝	
28	33211130/1	Խոլոստերոլ CHOLESTEROL /Ընդհանուր խոլեստիրինի թեսթ -հավաքածու/	Ախտորոշող թեսթ-սիստեմ բիոքիմիական անալիզի համար Խոլեստերինի որոշման թեսթ-հավաքածու (Chol- Col (TOTAL) liquichrom կամ համարժեքը) Մեթոդ: կոլորիմետրիկ (ծայրակետ) Ֆորմատ: 1x200 մլ կամ 2x100 մլ /1 թեսթը 1 մլ է/ Ստուգվող նմուշ: արյան շիճուկ/ պլազմա Հանձման պահին պիտանելիության ժամկետի	հատ	29,52	29520	1000	Հասցե: Ք. Երևան, Ամիրյան 23 Ենթակա քանակներ: 1000 Ժամկետներ՝ 2019թ-ի մարտի 31-ը՝	

			առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները 2-8oC, For In Vitro Diagnostic only(Կցված ֆայլ՝ lot_28_i_texnikakan_bnutagir.docx) Լեհաստան					
29	33211140/1	Բիլիռուբին Bilirubin /Ընդհանուր – ուղիղ բիլիռուբինի որոշման թեստ-հավաքածու	Ախտորոշող թեստ-սիստեմ բիոքիմիական անալիզի համար Բիլիռուբինի որոշման թեստ-հավաքածու (Bil- Col (T/D) liquichrom կամ համարժեքը) Մեթոդ: կոլորիմետրիկ (ծայրակետ) Ֆորմատ: 100մլ total/ 100 մլ direct (200 թեստ) /1 թեստը 1 մլ է/ Սպուգվող նմուշ: արյան շիճուկ/ պլազմա Հանձման պահին պիպետելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները 2-25oC, For In Vitro Diagnostic only(Կցված ֆայլ՝ lot_29_i_texnikakan_bnutagir.docx) Հնդկաստան	հատ	28,80	11520	400	Հասցե: Ք. Երևան, Ամիրյան 23 Ենթակա քանակներ: 400 Ժամկետներ: 2019թ-ի մարտի 31-ը՝
30	33211150/1	Միզանյութ Urea-Col/Միզանյութի որոշման թեստ-հաավաքածու	Ախտորոշող թեստ-սիստեմ բիոքիմիական անալիզի համար Միզանյութի որոշման թեստ-հավաքածու (Urea- Col liquichrom կամ համարժեքը) Մեթոդ: կոլորիմետրիկ (ծայրակետ) Ֆորմատ: 2x100 մլ /1 թեստը 1 մլ է/ Սպուգվող նմուշ: արյան շիճուկ/ պլազմա Հանձման պահին պիպետելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով(Կցված ֆայլ՝ lot_30_i_texnikakan_bnutagir.docx) Հնդկաստան	հատ	26,70	10680	400	Հասցե: Ք. Երևան, Ամիրյան 23 Ենթակա քանակներ: 400 Ժամկետներ: 2019թ-ի մարտի 31-ը՝
33	33211180/1	Տրիգլեցիրիդ TRIGLECERIDES /Եռգլիցերիդների որոշման թեստ-հավաքախու	Ախտորոշող թեստ-սիստեմ բիոքիմիական անալիզի համար Եռգլիցերիդների որոշման թեստ-հավաքածու (Trigl- Col liquichrom կամ համարժեքը)Մեթոդ: կոլորիմետրիկ (ծայրակետ)Ֆորմատ: 1x50 մլ (50 թեստ) /1 թեստը 1 մլ է/ Սպուգվող նմուշ: արյան շիճուկ/ Հանձման պահին պիպետելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները 2-8oC, For In Vitro Diagnostic only(Կցված ֆայլ՝ lot_33_i_texnikakan_bnutagir.docx) Լեհաստան	հատ	108,00	27000	250	Հասցե: Ք. Երևան, Ամիրյան 23 Ենթակա քանակներ: 250 Ժամկետներ: 2019թ-ի մարտի 31-ը՝
38	33211230/1	ՌՊՌ-Կարբոն RPR CARBON /Սիֆիլիսի որոշման թեստ-հավաքածու/	Սիֆիլիսի որոշման թեստ-հավաքածու (Syphilis RPR-100 կամ համարժեքը) Մեթոդ: ֆլոկուլյացիա, սկրինինգի համար Փաթեթավորումը 100 թեստ: Սպուգվող նմուշ: արյան շիճուկ/ պլազմա Հանձման պահին պիպետելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները 2-8oC: 1 հատը համարժեք է 1 թեստի:(Կցված ֆայլ՝ lot_38_i_texnikakan_bnutagir.docx) Հնդկաստան	հատ	56,19	112380	2000	Հասցե: Ք. Երևան, Ամիրյան 23 Ենթակա քանակներ: 2000 Ժամկետներ: 2019թ-ի մարտի 31-ը՝
39	33211240/1	Ռ–մատոիդ ֆակտոր Լատեքս Rematuoid factor-	Ռևմատոիդային ֆակտորների որոշման թեստ-հավաքածու (RF – lex կամ համարժեքը) Մեթոդ: լատեքսային ագլյուտինացիա Փաթեթավորումը	հատ	59,20	17760	300	Հասցե: Ենթակա քանակներ: Ժամկետներ:

		lex /Ռ–մատրիցային ֆակտորների որոշման թեստ-հավաքածու/	100 թեստ: Սպուգվող նմուշ: արյան շիճուկ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները 2-8oC: 1 հատը համարժեք է 1 թեստի:(Կցված ֆայլ՝ lot_39_i_texnikakan_bnutagir.docx) Հնդկաստան					Ք. Երևան, Ամիրյան 23	300	2019թ-ի մարտի 31-ը՝
40	33211250/1	U-ռեակտիվ պրոտեին-լատեքս C-Reactiv Protein-lex /C-ռեակտիվ սպիտակուցի որոշման թեստ-հավաքածու/	C-ռեակտիվ սպիտակուցի որոշման թեստ-հավաքածու (CRP – lex կամ համարժեքը) Մեթոդ: լատեքսային ագլյուտինացիա Փաթեթավորումը 100 թեստ: Սպուգվող նմուշ: արյան շիճուկ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները 2-8oC, For In Vitro Diagnostic only: 1 հատը համարժեք է 1 թեստի:(Կցված ֆայլ՝ lot_40_i_texnikakan_bnutagir.docx) Հնդկաստան	հատ	63,20	18960	300	Հասցե Ք. Երևան, Ամիրյան 23	Ենթակա քանակներ 300	Ժամկետներ 2019թ-ի մարտի 31-ը՝
41	33211260/1	Հակաստրեպտոլիզին -O Anti Streptolysina-O /Հակաստրեպտոլիզին -O որոշման թեստ-հավաքածու/	Հակաստրեպտոլիզին –O որոշման թեստ-հավաքածու Anti Streptolysina-O(Futura system կամ համարժեքը) Մեթոդ: լատեքսային ագլյուտինացիա Փաթեթավորումը 40 թեստ Սպուգվող նմուշ: արյան շիճուկ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները 2-8oC, For In Vitro Diagnostic only: 1 հատը համարժեք է 1 թեստի:(Կցված ֆայլ՝ lot_41_i_texnikakan_bnutagir.docx) Հնդկաստան	հատ	136,80	27360	200	Հասցե Ք. Երևան, Ամիրյան 23	Ենթակա քանակներ 200	Ժամկետներ 2019թ-ի մարտի 31-ը՝

ԳՆՈՐԴ
ՀՀ ազգային անվտանգության
ծառայություն
Նալբանդյան 104
010-579-599
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
900011301075
01507079
Արամ Հակոբյան

HAKOBYAN ARAM 3507590174

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by HAKOBYAN ARAM 3507590174
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••, serialNumber=64f4b4da096f, cn=HAKOBYAN ARAM 3507590174
Date: 2019.03.18 16:57:05 +04'00'

ՎԱՃԱՌՈՂ
«Վիոլա» ՍՊԸ
ք. Երևան, Աճառյան փ. 2-րդ նրբ.
թիվ 3
«Ամերիաբանկ» ՓԲԸ

1570001092880100
00801026
Ա. Մեժլումյան

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MEZHLUMYAN ARMEN 2104620082
Date: 2019.03.15 17:12:41 GMT+04:00

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
26	33211110/1	Մեդիասքրին MediScreen 10/Մեզի մեջ գլյուկոզի, արյան, սպիտակուցի, pH, կետոնների, տեսակարար կշռի, նիտրիտների, լեյկոցիտների, ուռոլոբինիգենի – բիլիռուբինի որոշման թեսթ ստրիպների հավաքածու	0	0	27600	27600	27600	27600	27600	27600	27600	27600	27600	27600	27600
27	33211120/1	գլյուկոզ G-col /գլյուկոզի որոշման թեսթ-հավաքածու	0	0	37320	37320	37320	37320	37320	37320	37320	37320	37320	37320	37320
28	33211130/1	Խոլոստերոլ CHOLESTEROL /Ընդհանուր խոլեստիրինի թեսթ - հավաքածու/	0	0	29520	29520	29520	29520	29520	29520	29520	29520	29520	29520	29520
29	33211140/1	Բիլիռուբին Bilirubin /Ընդհանուր – ուղիղ բիլիռուբինի որոշման թեսթ-հավաքածու	0	0	11520	11520	11520	11520	11520	11520	11520	11520	11520	11520	11520
30	33211150/1	Միզանյութ Urea-Col/Միզանյութի որոշման թեսթ-հաավաքածու	0	0	10680	10680	10680	10680	10680	10680	10680	10680	10680	10680	10680
33	33211180/1	Տրիգլեցիրիդ TRIGLECERIDES /Եռգլիցերիդների որոշման թեսթ-հավաքախու	0	0	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000
38	33211230/1	ՌՊՌ-Կարբոն RPR CARBON /Սիֆիլիսի որոշման թեսթ-հավաքածու/	0	0	112380	112380	112380	112380	112380	112380	112380	112380	112380	112380	112380

39	*33211240/1*	*Ռ–մատոիդ ֆակտոր Լատեքս Rematuoid factor-lex /Ռ–մատոիդային ֆակտորների որոշման թեսթ-հավաքածու/*	*0*	*0*	17760	17760	17760	17760	17760	17760	17760	17760	17760	17760	17760
40	*33211250/1*	*Ս-ռեակտիվ պրոտեին-լատեքս C-Reactiv Protein-lex /C-ռեակտիվ սպիտակուցի որոշման թեսթ-հավաքածու/*	*0*	*0*	18960	18960	18960	18960	18960	18960	18960	18960	18960	18960	18960
41	*33211260/1*	*Հակաստրեպտոլոիզին-Օ Anti Streptolysina-O /Հակաստրեպտոլիզին -Օ որոշման թեսթ-հավաքածու/*	*0*	*0*	27360	27360	27360	27360	27360	27360	27360	27360	27360	27360	27360

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ
ՀՀ ազգային անվտանգության
ծառայություն
Նալբանդյան 104
010-579-599
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
900011301075
01507079
Արամ Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ

HAKOBYAN ARAM 3507590174

Digitally signed by HAKOBYAN ARAM 3507590174
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••, serialNumber=64f4b4da096f, cn=HAKOBYAN ARAM 3507590174
Date: 2019.03.18 16:57:40 +04'00'

ՎԱՃԱՌՈՂ
«Վիոլա» ՍՊԸ
ք. Երևան, Աճառյան փ. 2-րդ նրբ.
թիվ 3
«Ամերիաբանկ» ՓԲԸ

1570001092880100
00801026
Ա. Մեժլումյան

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MEZHLUMYAN ARMEN 2104620082
Date: 2019.03.15 17:13:03 GMT+04:00

ԱՂՅԻՍԱԿ N 1

հրավերով նախատեսված ապրանքի համարը	Ապրանքի		Նախատեսվում է գնել 2019թ.				Ընդամենը
			I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
	Անվանումը	Չափման միավորը	քանակը	քանակը	քանակը	քանակը	քանակը
1	2	3	4	5	6	7	8
26	Մեդիասքրին MediScreen 10 /Մեզի մեջ գլյուկոզի, արյան, սպիտակուցի, pH, կետոնների, տեսակարար կշռի, նիտրիտների, լեյկոցիկների, ուռոբիլինոգենի և բիլիռուբինի որոշման թեսթ-ստրիպների հավաքածու/	հատ	5000	0	0	0	5000
27	ԳլյուկոզG-Col /Գլյուկոզի որոշման թեսթ- հավաքածու/	հատ	3000	0	0	0	3000
28	Խոլեստերոլ CHOLESTEROL Ընդհանուր խոլեստերինի որոշման թեսթ- հավաքածու/	հատ	1000	0	0	0	1000
29	Բիլիռուբին Bilirubin /Ընդհանուր և ուղիղ բիլիռուբինի որոշման թեսթ- հավաքածու/	հատ	400	0	0	0	400
30	Միզանյութ Urea-Col / Միզանյութի որոշման թեսթ- հավաքածու/	հատ	400	0	0	0	400
33	Տրիգլիցերիդ TRIGLYCERIDES / Եռգլիցերիդների որոշման թեսթ- հավաքածու/	հատ	250	0	0	0	250
38	ՌՊՌ-Կարբոն RPR-CARBON / Սիֆիլիսի որոշման թեսթ- հավաքածու/	հատ	2000	0	0	0	2000
39	Ռևմատոիդ ֆակտոր լատեքս Reumatoid factor –lex / Ռևմատոիդային ֆակտորների որոշման թեսթ- հավաքածու/	հատ	300	0	0	0	300
40	Ս-ռեակտիվ պրոտեին-լատեքս C-Reactiv Protein-lex / C-ռեակտիվ սպիտակուցի որոշման թեսթ- հավաքածու/	հատ	300	0	0	0	300
41	Հակաստրեպտոլիզին –O Anti Streptolysina-O /Հակաստրեպտոլիզին –O որոշման թեսթ- հավաքածու/	հատ	200	0	0	0	200

Ծանոթություն

* Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս:

Ապրանքի տեղափոխումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը՝ բանվորական ուժով կատարվում է մատակարարի կողմից: Ապրանքը մատակարարվում է ք. Երևան, Ամիրյան 23 հասցեով:

Տեխնիկական բնութագրերով բոլոր հղումների դեպքում Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, 5-րդ մասի համաձայն հասկանալ կամ համարժեքը:

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն